

ք. Ստեփանակերտ

**ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ
ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և ելնելով ռազմական դրության պայմաններում Արցախի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովության հետ կապված հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունից՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ եթե անձի հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը սահմանված էր 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, սակայն բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի աշխատանքների 2020 թվականի հուլիսի 15-ից կասեցման և Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած լայնածավալ ռազմական գործողությունների պատճառով անձը բժշկասոցիալական փորաքննության չի ենթարկվել, ապա նրա հաշմանդամության վերափորձաքննության ժամկետ է համարվում 2021 թվականի հունվարի 15-ը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կենսաթոշակները և դրամական այլ հատուցումները վճարվում են բժշկասոցիալական փերձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի՝ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը տված վարչական ակտում նշված հաշմանդամության խմբի համար հաշվարկված չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ